

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ԹԱՏԵՐԳՈՒԹՅԱՐԳ*

ԼԵՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱրՊՅ Հայ գրականության և լրագրության ամբիոն
բ.գ.թ., պրոֆեսոր

Արցախի ազգային-ազատագրական պայքարը գրական տարբեր ժանրերի նյութ է մատուցել մեր հեղինակներին: Բացառություն չկազմեց նաև թատերգությունը՝ Ջինավուր Գևորգյանի, Վարդան Հակոբյանի և Կոմիտաս Դանիելյանի պիեսներով: Ի դեպ, նրանցից երկուսը որդեկորույս հայրեր են, որոնք իրենց որդիներին զոհ տվեցին՝ հանուն Արցախի անկախության և ազատության:

Երեք պիեսներն էլ՝ «Պապ, կրակում են», «Արցախյան բալլադ», «Մենք մեր սարերն ենք», ընդգրկում են արցախյան գոյապայքարի մեկ շրջափուլը, բայց այն չի խանգարում, որ հանդիսատեսը բեմի վրա տեսնի մեր ժողովրդի նվիրական իղձը՝ Արցախը Սայր Հայաստանի գրկում: Վստահությամբ ասենք, որ պիեսներում պատկերելով զանազան սուր բախումներ, զաղափարական այլևայլ դրսևորումներ, հոգեբանական յուրովի ընկալումներ, այնուամենայնիվ, պիեսների վերջում բոլոր հերոսների իղեալը դառնում է ազատագրված Արցախը:

Ջինավուր Գևորգյանի «Պապ, կրակում են» պիեսն ունի խոսուն ու զգաստացնող վերնագիր: Ասել է թե՛ Արցախը վտանգի մեջ է. թռռան երկու հատիկ բառը ազդարար է աշխարհով մեկ սփռված հայությանը՝ ի գեմ, կրկին Ավարայր է...

Ջինավուր Գևորգյանի պիեսն ունի հինգ արար, գործողությունը կատարվում է Արցախի սահմանամերձ գյուղերից մեկում: Թատերագիրը արցախյան «նկուղային» կյանքը, հերոսական գոյամարտը, թրքական ոճրագործությունը կյանքից վարպետորեն բարձրացնում է բեմ: 1992 թվականն էր, թատրոնի շենքից դուրս շարունակվում էր պատերազմը, և բեմադրական-արհեստական պայթյունների ձայնին միախառնվում էին պատերազմական իրական կրակոցներն ու պայթյունները:

Սահմելեցուցիչ է պիեսի մուտքը: Նկուղային մութ սենյակ, թույլ լուսավորող մոմեր և անհանգիստ պապ ու թոռ: Կրակոցները խանգարում են պատանի Սամվելի քունը, այդ էլ քանի՜-քանի՜ օր ու գիշեր: Պայթյուններն ասես հոշոտում են երեխայի մանկությունը: Սամվելը վախկոտ չէ, նա վախից չէ կանչում պապին, այլ դողում է պապի կյանքի համար, հետո էլ հայրը՝ Թաթուլը, խոստացել էր նրան ինքնաձիգ բերել, և դա տղայի փայփայած գաղտնիքն էր:

Ջինավուր Գևորգյանը հայրենասիրական սուր զգացումով է ընդգծում, որ արցախցի երիտասարդները արժվորդիներ են, սերնդեսերունդ արյամբ փոխարկել են այդ իղեալը՝ կռվել ու իրականացնել ապուպապերի երազանքը՝ Արցախն առանց թուրքերի: Միքայել պապն այստեղ խորհրդանշում է տարեց արցախցուն, որի կերպարում ընդգծվում են իմաստնությունը, լավատեսությունը, ինչպես նաև՝ հայրական հպարտությունը, որովհետև իրեն փոխարինել է Թաթուլ որդին, որի անունը սարսափեցնում է թշնամուն: Եվ նա Թաթուլին կորցնելուց

* Հոդվածն ընդունվել է 26.09.2013:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ Հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

հետո անգամ շարունակում է հպարտանալ իր քաջ զավակով, թոռանն ասում է՝ «հնձ է քաշել», իսկ ինքն իրեն մրմնջում՝ «զլուխդ բարձր պահիր, սզվոր»:

Հաճախ էլ Միքայելին դարձնելով խոսափող՝ հեղինակն արտահայտում է մեր ժողովրդի միասնական կամքը. «Հիմա պատերազմ է արդարության, իրավունքի, ազգի գոյատևման...»:[1]

«Պապ, կրակում են» պիեսի գործողությունները հիմնականում պտտվում են Միքայելի ընտանիքի շուրջը: Ձուկում է Միքայելը, նրա ինքնաձիգը վերցնում է կինը՝ ռուզանաժին Նարինեն, որի կերպարն իր ամբողջությունն է ստանում գերեվարման տեսարանում: Նարինեին վերջին պահին թուրքերից ազատում է որդին՝ Սամվելը: Հայ զինվորներն հաճախ են մարդկության, բարոյականության դասեր տալիս արնախում ազերիներին, իսկ երբ նրանց չի հասնում խոսքը, գործի են դնում ինքնաձիգը:

«Պապ, կրակում են» պիեսում իրական կեցվածք ունեն հերոսները, ստույգ են պատերազմական գործողությունները, պահպանվում են արցախյան տեղանունները, չկան պայմանական, երևակայությամբ ստեղծված գյուղերի անուններ, իսկ հաղթանակի ավետիսը դառնում է Շուշիի ազատագրումը, որով էլ ավարտվում է գործողությունը:

Պիեսի ամենալարված իրավիճակն այն տեսարանն է, երբ թուրքերը գերի են վերցնում Թաթուլի կնոջը՝ Նարինեին՝ ցուցաբերելով իրենց թրջությունը հայ կնոջ հանդեպ: Տանջանքն ավելի է սուր բնույթ կրում, երբ իմանում են, որ Թաթուլի կինն է:

Նարինեի ազատագրումը թուրքերից ինքնին հաղթանակի ավարտի հայտարարությունն էր, որին հաջորդում է Շուշիի ազատագրումը: Միքայելի ընտանիքի միջոցով հեղինակը վերհանում է արցախյան ընտանիքի թե՛ ողբերգությունը, թե՛ անսասան հավատն ու արիությունը, և թե՛ հաղթանակի բերկրանքը: Թեև գործողությունը հիմնականում կատարվում է նկուղում, բայց թատերագիրը, օգտագործելով ռադիոհանգույցը, հանդիսատեսին իրազեկ է պահում պատերազմական իրադարձությունների մասին:

Զինավոր Գևորգյանի «Պապ, կրակում են» պիեսը թերի կլիներ, եթե հեղինակը ուշադրություն չդարձներ Ադրբեջանից եկած փախստականների հոգեբանությանը, նրանց գաղափարախոսությանը: Իհարկե, ինչպես վկայում են պիեսի հերոսները, նրանցից շատերը անմիջապես վերցրին զենքը՝ պաշտպանելու իրենց պապենական հողը, բայց փախստականների մեջ դեռևս կային հոգեբանորեն անպատրաստ ու տատանվող անձեր, ովքեր դեմ էին ազգային-ազատագրական մեր պայքարին: Գևորգյանը պիեսում ստեղծել է այդպիսի համոզիչ ու տիպիկ կերպար՝ ի դեմ համագյուղացի 70-ամյա Առաքելի: Առաջին պատկերներում փախստականն ուներ ըմբոստի էություն, բայց ըմբոստացումը թուրքերի դեմ չէր, այլ՝ հայերի, որ՝ ինչո՞ւ սկսեցին Արցախյան շարժումը. «Ապրում էինք: Վատ չէինք ապրում... ո՞ւմ էր պետք այս բոլորը ...»:[2]

Սակայն Առաքելի ընկալումները փոխվեցին, հոգեբանությունը կամաց-կամաց ազատագրվեց ադրբեջանական մտածողության կապանքներից, երբեմն էլ թուրքումուր ստանալով բուժքույր Սիրանուշից, նաև շնորհիվ Միքայելի հայրենասիրական դասերի՝ նա վերջին պատկերներում գնում է շտաբ, զինվորագրվում և Միքայելի թոռան՝ Սամվելի ջոկատում, մեկնում ռազմաճակատ՝ բոլորի

նման, բոլորի հետ:

«Պատի, կրակում են» պիեսում պահպանված են դրամատիկական սեռի կանոնները, որի արդյունքում գործողությունն ստանում է սուր ընթացք, էպիկականը տեղը զիջում է զուտ անցուդարձերին ու ծավալվող իրադարձություններին, և այս առումով պիեսը շահում է: Այն զերծ է կեղծ ու շինծու պատկերներից, զգացմունքների պատկերումը կենդանի ու համոզիչ է և փոխանցվում է հանդիսատեսին: Եվ արցախյան դրամատուրգիան այդ պիեսով ունի արցախյան գոյամարտը պատկերող զգացումներով առատ մի հետաքրքիր ու մնայուն գործ:

Եթե Զինավոր Գևորգյանի պիեսը զուտ դրամա է, ապա Վարդան Չակոբյանն ընտրել է դրամատիկական պոեմի ժանրը՝ արձակ ձևով: Չակոբյանի «Արցախյան բալլադ» վերնագիրն իսկ հուշում է երկի հերոսական բնույթը, որը հատուկ է բալլադի ժանրին՝ հերոսականը զուգակցելով ողբերգականի հետ: Եվ ի տարբերություն նախորդ պիեսի, ուր գործողությունները սրընթաց են՝ ակնհայտ լարվածությամբ, ապա Վարդան Չակոբյանի մոտ իշխում են էպիկականն ու քնարականը՝ բխելով պոեմի առանձնահատկություններից: Չաճախ էլ կենդանի գունավորմամբ խոսում են ռոմանտիկական պատկերները: Թատերագիր Չակոբյանն այստեղ օգտագործում է մի քանի գեղարվեստական հնարանքներ, որոնք օգնում են ավելի պատկերավոր վերարտադրելու Արցախյան գոյամարտի նրբություններն ու պատմական անցքերը: Այս կարգի հնարանքները բացակայում են Զինավոր Գևորգյանի մոտ:

Դրամատիկական արձակ պոեմում ընդգրկելով տասնութ գործող անձանց՝ Վարդան Չակոբյանը շրջանառության մեջ է դնում գործողության զարգացման մի քանի հիմնական օղակ: Զինավոր Գևորգյանի նման Չակոբյանը չի ստեղծում թուրքերի տիպական կերպարներ, բայց Ադրբեջանի հայահալած քաղաքականությունը, Արցախյան գոյամարտի սկզբնապատճառը ներկայացնում է հենց պոեմի մուտքից՝ նկարագրելով թուրքերի հայատյաց վայրագությունները, Սովետական Միության փլուզումը՝ ԽՍՀՄ-ի զերբի խորտակման տեսքով:

Անչափ տիպիկ է «Էս ծառը մերն է, էս սարը մերն է» բանաստեղծական տողը, որով ավելի է ընդգծվում թշնամու ասելիքը. տիրանալով հայկական հողերին՝ թուրքը հիմա էլ ուզում է գողանալ հայոց խաչքարերը, հայոց այբուբենը և, ի վերջո, հային համարելով ազերի: Այս վայրենաբարո գործողություններին Չակոբյանը զուգահեռում է Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու զանգերը: Սա դրամատիկական պոեմի մուտքն է, որին հաջորդում է երկու արարից բաղկացած գործողությունը:

Թատերագիրը գործողության զարգացումը տանում է՝ ուղեցույց դարձնելով Պատմիչի էպիկական պատումները հայ ժողովրդի հերոսական անցյալի մասին՝ մեկ անգամ ևս ընդգծելով, որ մեր ժողովուրդը աշխարհի հնագույն ժողովուրդներից է, գալիս է Նոյի ժամանակներից: Վկայակոչելով տարբեր հերոսների՝ Վ. Չակոբյանը ընդգծում է մեր ժողովրդի ողբերգական պատմությունը՝ հիշելով Կարսը, Վանը, Սարիղամիշը... Արցախի ազգային-ազատագրական պայքարը դիտում է որպես Ավարայրի, Սարդարապատի շարունակություն: Դրամատիկական պոեմի հերոսները՝ վճռականությամբ լեցուն, նպատակադրվում են այս անգամ վրեժ լուծել բոլոր դարերի հայ նահատակների համար:

Պատմիչը դառնում է հեղինակի խոսափողը, որն իր միջամտությամբ ավելի է

հարստացնում պատմականությունը, ընդգծում մեր ժողովրդի անցած ողբերգական ու դյուցազնական ուղին:

«Արցախյան բալլադում» կա խորհրդանշական ևս մի գեղարվեստական հնարանք՝ մոմերի առեղծվածը: Բաց դաշտում վառվում են մոմերը, և յուրաքանչյուր մոմ բառ ու խոսք է, յուրաքանչյուր մոմ անձնավորում է տարբեր դարաշրջանի մի նահատակի: Խոսում են մոմերը՝ սկսած Նոյի ժամանակից՝ հասնելով Արցախյան գոյամարտի տարիները, ասել է թե՛ խոսում է հայ ժողովրդի պատմությունը: Արցախյան պատերազմի հաղթանակի կարևորությունը ընդգծվում է Ավոյի՝ Մոնթե Մելքոնյանի մոմի պատգամով. «Տղերք, եթե մենք կորցնենք Արցախը՝ մենք կշրջենք մեր ժողովրդի պատմության վերջին էջը»: [3] Արշակը, Արեգնուհին, Անուշը, Ժորան, Հովեն ու մյուսները երկնավոր դարձած հերոսների հետ են, նրանց մոմերը հայերի արյունով են ողողված, բայց, ինչպես Պըլը Պուղին է ասում. «Մոմերի լույսից բացվում են շողեր...»: [4]

Պըլը Պուղու կերպարի ներգրավումը գործողության մեջ, ավելի է շեշտում արցախականը, բայց երբեմն այդ կերպարը աղոտանում է, հեռանում իմաստախոս ու սրամիտ Պըլը Պուղուց: Այսպես, երբեմն Արշակ քեռին, որ խոսում է Պուղու հետ, ավելի սրամիտ է դառնում, քան արցախցի Եզրպուր:

Արցախցու հոգեբանությունը ճշմարիտ գույներով է ներկայացված Արշակի կերպարում, որը մի ոտքը թողել է Մեծ Հայրենականում, հիմա էլ Ժորայի հետ գենըն առած՝ գնում է պաշտպանելու արցախյան հողը:

Դրամատիկական պոեմին մի առանձին հմայք է տալիս Վարդան-Սաթենիկ ռոմանտիկական սիրո պատմությունը՝ տեսիլքի ձևով, ավա՞ղ, երկուսն էլ դառնում են պատերազմի զոհ: Այս գողտրիկ սիրո պատմությամբ ընդհանրացվում են արցախյան բազում ողբերգական սերեր, որոնց լափեց ամեհի պատերազմը: Տեսիլայինը ևս գեղարվեստական մի հնարանք է, որի միջոցով թատերագիրը հանդիսատեսին է մատուցում իր խոսքը, բացում պատերազմական այլևայլ գաղտնիքներ, ժխտում այն ընդհանրապես:

«Պապ, կրակում են» պիեսի հերոս, փախստական Առաքելի երկվորյակն է ասես Վարդան Հակոբյանի Սերոժը, որին հեղինակը ներկայացրել է ավելի խտացված գույներով: Սերոժին ուղղակի ձեռ են առնում մյուս հերոսները, և նրանց խոսքի տակից ուզում է արդարացված դուրս գալ ռուսերենով բարբաջող հերոսը, որը մի կերպ անցնում է բարբառին՝ «Փի՞ս ինք իլալ ասրելիս»: Կամաց-կամաց փոխվում է Սերոժի հոգեբանությունը, վճռում է գնալ ու կռվել հայրենի Արցախի համար՝ ասելով. «Ձդես աստալիս տուլկո ժենշինը: Յա նի՞ մուժչինա, շտո լի»: [5]

«Արցախյան բալլադի» հերոսները տիպական են և, հանդես են գալիս տիպական հանգամանքներում, թերևս բացառություն է կազմում Գեղամի կերպարը: Նա 14 տարեկան է, սակայն նրա պահվածքը, խոսակցությունը, հարցադրումները կարելի է վերագրել 7-8 տարեկան երեխայի: Թվում է՝ պատերազմը պիտի ավելի հասունացրած լինի նրան և՛ ոչ ընդհակառակը:

Հակոբյանի դրամատիկական պոեմում պատմական իրադարձությունները, անցումներն ընդհանուր առմամբ իրական գույներով են ներկայացվում:

Այն Արցախյան պատերազմի թեմայով գրված լավագույն դրամատիկական երկերից մեկն է:

Ի տարբերություն Ձինավուր Գևորգյանի և Վարդան Հակոբյանի դրամատիկական գործերի, որոնք ստեղծվել են Արցախյան զոյանարտի տարիներին, Կոմիտաս Դանիելյանի «Մենք մեր սարերն ենք» պիեսը գրվել է պատերազմից հետո՝ 2007թվականին: Այն գրված է հայրենասիրական բուռն ոգևորությամբ և մեզ տեղափոխում է արցախցիներիս պարտադրված պատերազմի ժամանակաշրջանը: Ի պատիվ հեղինակի՝ նրան հաջողվել է այդ ոչ դյուրին թեման հասցնել գեղարվեստական ընդհանրացման: Պատերազմի պատճառած անողորմ ցավն ու տառապանքները, որոնք ավերել, բեկել են մարդկանց ճակատագրերը, ներկայացված են լավատեսական շեշտադրմամբ:

Թշնամին գրավել է հայկական գյուղը, որի բնակիչները նախապես լքել են այն: Բայց ահա մայր ու տղա, չկարողանալով, թե՞ չհասցնելով հեռանալ, պատսպարվել են գետնահարկում: Մայրը հղիության վերջին շրջանում է: Թվում է՝ փրկության ոչ մի հույս չկա: Ի՞նչ անել: Եվ ահա 13-ամյա տղային երազում հայտնվում է հայրը(ով, ինչպես հետո պիտի պարզվի, զոհվել է պատերազմի դաշտում) և հուշում փրկության ելքը: Նրանց բախտից, թեև ապրիլն էր, առատ ձյուն էր տեղացել, և տղան՝ անասելի տանջանքների ենթարկվելով, գիշերը սահնակով թշնամուց օղակված գյուղից դուրս է բերում մորը, հասցնում մերոնց, որտեղ էլ ծնվում է նրա երազած ախպերիկը, ով տղայի իսկ ցանկությամբ պիտի կնքվեր հոր անունով՝ Մուշեղ: Ասել է թե՝ «կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք», - այս է ստեղծագործության գերխնդիրը, որը թատերագիրը շեշտում է հատկապես տղայի դպրոցական շարադրության մեջ. «Ձյուն տեղա, կարկուտ տեղա, թե անձրև, սարերը անսասան են, հպարտ կանգնած իրենց տեղում, Մենք մեր սարերն ենք: Մեզ ոչ մի ուժ չի կարող պոկել մեր սարերից»: [6]

Պիեսն աչքի է ընկնում սյուժետային գրավչությամբ, կուռ, ավարտուն կառուցվածքով, հերոսների հստակ տիպականացմամբ, որոնք, միասին վերցրած, սուր դրամատիզմ և հուզականություն են հաղորդում ստեղծագործությանը: Դա առաջին հերթին վերաբերում է դժբախտության մեջ հայտնված մոր և տղայի միմյանց նկատմամբ տածվող անսահման հոգատարությանը, նվիրվածությանը, որոնք գրողը ներկայացնում է հոգեբանական նուրբ անցումներով:

Ընդունված է ասել, որ պատերազմի ժամանակ երեխաները շուտ են հասունանում: Այդպես է և Դանիելյանի կերտած փոքրիկ, խիզախ հերոսը, ինչը, քիչ է ասել, զարմանք է պատճառում մինչև իսկ հարազատ մորը: Տղան յուրայիններին գտնելու, օգնություն հայցելու նպատակով գիշերը հետախուզության է գնում, բավականին հեռանալով գյուղից: Այդ մասին իմանալով, մայրը սարսափում է՝ իսկ եթե մոլորվեի՞ր: «Մեր հողում ինչո՞ւ պիտի մոլորվեն», -պատասխանում է տղան: Մեր զինվորներից տեղեկանալով հոր զոհվելու մասին, նրանց սառնասրտորեն խնդրում է մորը չասել. «Մայրս չի դիմանա»:

Համոզիչ, ընդգծված կերպարներ են ժողովրդի տարբեր խավերը ներկայացնող, տարբեր տարիքի, տարբեր խառնվածքի, բնավորության տեր զինվորները՝ Մարտիկը, Համոն և Սերոն, որոնք մի կողմ թողնելով իրենց երբեմնի զբաղմունքն ու նախասիրությունները, հայրենիքի կանչով գենք են վերցրել՝ թուրք բարբարոսներից պաշտպանելու հող հայրենին, պատրաստ անհրաժեշտության դեպքում նրա զոհասեղանին դնելու ամենաթանկը՝ իրենց կյանքը. «Պատերազմը, -ասում է Մարտիկը, -մի բան է հաստատում՝ մեր տղամարդ լինել-չլինելը»: [7]

Իսկ երբ խոսք է բացվում հայրենիքը վտանգի պահին լքած «տղամարդկանց» մասին, դառնորեն հեզնում է. «Լավ է, որ փախել են, այլապես ավելորդ բռն կդառնային մեզ համար»:

Պիեռի լավագույն պատկերներից է «թռչունների տեսարանը», երբ Սերոն հորիզոնում հայտնված թռչուններին թշնամական ուղղաթիռների տեղ է դնում: Հետո, երբ պարզվում է իրողությունը, նրանք մի ակնթարթ վերանում են իրականությունից, ընկնում երազների գիրկը: Եվ այդ պահին այնքան անհեթեթ է թվում պատերազմ կոչվածը, ապա սթափվելով՝ հրճվանքով եզրակացնում են. «Թռչունները բարի հրեշտակներ են... Ուր որ է պատերազմը կավարտվի»: Ամենագլխավորը՝ նրանք բոլորը համոզված են, հավատում են, որ հաղթողը իրենք կլինեն, որ հաղթանակը մերը կլինի, ինչը շատ բան է ասում հայրենիքի ճակատագրով ապրող իսկական զինվորի մասին:

Պիեսում ուշագրավ կերպար է Գալուստը, ով իր մեջ կրում է անցյալ դարավերջին հայությանը բաժին հասած գրեթե ողջ տառապանքը՝ գաղթ, երկրաշարժ, հարազատների կորուստ, այդուհանդերձ, նա իր մեջ ուժ է գտնում ամուր կանգնելու հայրենի հողին, ինչ-ինչ մասնակցություն ունենալ մեզ համար, հիրավի, հայրենական դարձած պատերազմին: Այդքանից հետո ինչո՞ւ իր կյանքի մնացած մասը չկապել բախտից հալածված մի այլ անձնավորության՝ Ծաղիկի հետ: Միասին գուցե հեշտ լինի փոքրիշատե թեթևացնել երկուստեք կրած ճակատագրի դաժան հարվածները:

Կոմիտաս Դանիելյանը հաջողությամբ է ներկայացրել նաև թշնամական կողմի ներկայացուցիչներին՝ թուրք սպային ու թղթակցին:

Եթե Զինավուր Գևորգյանն ու Վարդան Հակոբյանը կերտել են հայ փախստականների կերպարներ, ովքեր սկզբում դեմ էին Արցախյան շարժմանը, ապա Կոմիտաս Դանիելյանը կերտել է մի կնոջ կերպար, որը ճակատագրի բերումով ամուսնացած է եղել թուրքի հետ, և հարազատ որդին նրան քշել է տնից, ակամապատված ճանապարհով ուղարկել հայերիս մոտ: Արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լևոն Մուրաֆյանը գրում է. «Կենսաբանական վախը, արենակցությունը ժխտելու սովորույթը և կույր թշնամանքը սպային հանում են մոր դեմ, նա վերադառնում է տուն և վճռում մորը՝ թույլ տալով, որ իր ազգակիցները ժողովեն նրան, դեպի հայկական դիրքերն ուղարկեն ակամապատ ճանապարհով... Հայ տղան, արհամարհելով մահը, սայլակի վրա հղի մորը հասցնում է յուրայինների մոտ՝ անլուր տանջանքների գնով... Թուրք սպան մորն ուղարկում է մեռնելու, հայ տղան՝ դեպի փրկություն: Թուրք սպան ենթարկվում է ցեղային բնազդներին, իսկ հայ տղայի համար կարևորը մոր փրկությունն է»: [8]

Սյուժետային երկու գծերն էլ միահյուսվում են, և թատերագիրը պիեսն ավարտում է նորաժին մանկան ճիչով: «Երկար սպասված գործ է սա, որովհետև ժողովուրդը պարզ ու հասկանալի մղումով ուզում է իր պատմության բախտորոշ մի ժամանակաշրջանի գեղարվեստական մարմնավորումը տեսնել բեմում, ինքն իրեն դիտել կողքից՝ կրկին վերափնաստավորելու այն դժնդակ օրերի պատմությունը»: [9] Իրոք որ Արցախյան համազգային պայքարին նվիրված արժանի գործեր են գրել մեր համերկրացի գրողները, բեմ բարձրացրել և ժամանակի դատին հանձնել մեր ժողովրդին պարտադրված պատերազմը:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գևորգյան Զ., «Պապ, կրակում են», ձեռագիր, Ստեփ., 1992, էջ 10:
2. Նույն տեղում:
3. Հակոբյան Վ., «Երկեր», հատոր Դ, Ստեփ., 2008, էջ 352:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում, էջ 378:
6. Դանիելյան Կ., «Մենք մեր սարերն ենք», Ստեփանակերտ, 2012, էջ 165:
7. Նույն տեղում, էջ 167:
8. Նույնի առաջաբանը:
9. «Լուսարար», 2007, թիվ 24:

РЕЗЮМЕ

Арцахская война: драматургия

Лена Григорян

На тему арцахского освободительного движения было написано много произведений разных литературных жанров. Не стала исключением и драматургия: пьесы Зинавур Геворкяна “Дедушка, стреляют”, Вардана Акопяна, “Арцахская баллада” и “Мы наши горы” Комитаса Даниеляна, поставленные в г. Степанакерте, на сцене театра им. В. Папазяна.

SUMMARY

The War of Artsakh in Drama

Lena Grigoryan

Many works touching upon the Artsakh liberation movement have been found in different genres. Drama isn't an exception. The plays “Grandfather, there are shots” by Zinavur Gevorgyan, “The Artsakh ballad” by Vardan Hakobyan and “We are our mountains” Komitas Danielyan were staged in Stepanakert theatre after V. Papazyan.